**Արձանագրություն 5**

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կարիքների համար «ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-21/31» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնումներ կատարելու գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 21.05.2021թ. ժամը 14:00-ին:

***Մասնակցում էին՝***

***Հանձնաժողովի նախագահ՝***

Կարեն Խաչատրյան - տնտեսական բաժնի պետ (ԳՊ/ԳԱՊ)

***Հանձնաժողովի անդամներ՝***

Սամվել Մովսիսյան - տնտեսկան բաժնի փականագործ (ԳՊ/ԳԱ)
Վանիկ Գևորգյան - տնտեսական բաժնի պարետ (ԳՊ/ԳԱ)
Վահե Գարեգինյան - ֆինանսական բաժնի գլխավոր մասնագետ (ԳՊ/ԲԱ)
Սիրանուշ Հարությունյան - գնումների և մատակարարման բաժնի մասնագետ (ԳՊ/ԲԱ)

***Գնումները համակարգող՝***

Անդրանիկ Ամիրջանյան - գնումների և մատակարարման բաժնի առաջատար մասնագետ

***<u>Օրակարգ</u>***

***<u>Միաժամանակյա բանակցությունների վարման մասին</u>***

***<u>Բանակցություններին ոչ մի մասնակից չի ներկայացել և նոր գնային առաջարկ չի եղել:</u>***

**1. Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.**

1.1 «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-21/31» ծածկագրով գնման ընթացակարգի 9-րդ և 39-րդ չափաբաժինները հայտարարել չկայացած՝ հայտեր չեն ներկայացվել, 1-ին չափաբաժինը հայտարարել չկայացած՝ նվազագույն գնային առաջարկները հավասար են և նոր գնային առաջարկ չի արվել, իսկ 10-րդ, 11-րդ, 24-րդ, 31-րդ և 38-րդ, չափաբաժինները հայտարարել չկայացած, քանի որ ներկայացված գնային առաջարկները գերազանցում են տվյալ ապրանքների ձեռքբերման համար նախատեսված ֆինանսական միջոցները և նշված չափաբաժինների մասով նույնպես նոր գնային առաջարկներ չեն արվել:

1.2 «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-21/31» ծածկագրով գնման ընթացակարգի 2-րդ, 3-րդ, 6-րդ 19-րդ, 21-րդ, 22-րդ, 25-րդ, 26-րդ 27-րդ, 29-րդ, 32-րդ, 33-րդ, 34-րդ և 35-րդ չափաբաժինների մասով հաղթող մասնակից ճանաչել նվազագույն գնային առաջարկ ներկայացրած «Արմեն Հասանյան» ԱՁ-ին, 4-րդ, 5-րդ, 7-րդ, 8-րդ, 12-րդ, 14-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ, 20-րդ, 23-րդ, 28-րդ և 30-րդ չափաբաժինների մասով՝ «Էկոմիքս» ՍՊԸ-ին, 13-րդ չափաբաժնի մասով՝ «ՎԻԸՆԴԵՄ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին, 18-րդ չափաբաժնի մասով՝ «Բիգ պլաստ» ՍՊԸ-ին, 36-րդ չափաբաժնի մասով՝ «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ին, 37-րդ չափաբաժնի մասով «Ռուզաննա Մինասյան Վաղինակի» ԱՁ-ին:

1.3 Մասնակիցներին սահմանված կարգով, անգործության ժամկետի ավարտից հետո, կառաջարկվի կնքել համապատասխան պայմանագրեր:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0*

| | |
|---|---|
| Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ | Կարեն Խաչատրյան |
| Հանձնաժողովի անդամներ՝ | |
| | Սամվել Մովսիսյան |
| | Վանիկ Գևորգյան |
| | Վահե Գարեգինյան |
| | Սիրանուշ Հարությունյան |
| Գնումները համակարգող՝ | Անդրանիկ Ամիրջանյան |